Լիլ Արամի

Վեպը, որ տպավորում է. «Հուդա»

Ամոս Օզի «Հուդա» վեպի հիմքում ութսուն սերունդների ատելության արժանացած Հուդա Իսկարիովտացու և Հիսուս Նազովրեցու փոխհարաբերություններն են միմյանց և իրենց վարքագրությունն ուսումնասիրողների նկատման, որոնք քննվում են Շմուել Աշի կողմից: Հեղինակը բռնում է ժամանակի պահանջով երբեմն անտեսված իրականության, մարդկային պատմության մեջ ամենամեծ ատելությանը դատապարտված Հուդայի կողմը՝ իր տեսակետը ներկայացնելով վեպի թվացյալ գլխավոր հերոսի՝ Շմուել Աշի համալսարանական ավարտական աշխատանքի միջոցով: Ինչո՞ւ թվացյալ, որովհետև, ըստ էության, վեպում գլխավոր հերոսը հարցն է, այո հարցական նշան կրող նախադասությունը, որը հարցեր է առաջացնում ընթերցողի և Շմուելի ներսում: Ի վերջո՝ հիշենք վեպի ավարտը՝ «հարցեր է տալիս ինքն իրեն»: Քանի դեռ կան հարցեր տալու, կա նաև կյանք, քանի դեռ կա բանավեճ ու երկխոսություն, կա կեցություն: Հեղինակը, որքան էլ հակված է վեպը ողողել Հուդայի գովերգությամբ, միևնույն է, ընթերցողին չի պարտադրում լինել համակարծիք, քանի որ որքան էլ ազդեցիկ ու հենք ունեցող է Շմուելի խոսքը, նույնքան ծանրակշիռ է նաև Վալդի խոսքն ուղղված Հիսուսին և տեսակետը, որ պատկանում է ընթեցողին: Այս բազմակողմանի հավասարակշռության էլ Ամոս Օզը ի ցույց է դնում մարդկային գոյության ամենակարևոր բաղադրիչը՝ հաղորդակցությունը, որը թե՛ հարց, թե՛ պատասխան է ակնկալում: Ուստի՝ վեպի գլխավոր հերոսը շարունակում է լինել հարցը: Առհասարակ, վեպում գործողությունները ծավալվում են խոսքի՝ պատմելու միջոցով:
Շմուելի աշխատանքը խոսելն է: Ուրեմն, Ամոս Օզը խոսքը, բանավեճը համարում է վարձատրվող աշխատանք, իսկ վարձատրությունը միտքն է, նոր

գաղափարը, որ ծնվում է առողջ բանավեճից:
Ինչպես յուրաքանչյուր մարդու մոտ, այնպես էլ Շմուելի դեպքում երկխոսությունը կացության ձև էր:
Թվում է՝ հեղինակը չի սահմանափակում ընթերցողի տեսադաշտը և պահում է իր անկախությունը հերոսներից՝ գործողությունները ներկայացնելով երրորդ դեմքով, սակայն այս թվացյալ անկախության տակ նա նույնացվում է Շմուել Աշի հետ: Եթե ուշադիր լինենք, վեպում մեր տեղաշարժը միայն Շմուելի հետ է. չգիտենք՝ ինչպիսինն են մյուս հերոսները նրա բացակայության ժամանակ, և ընթերցողի շփումը նրանց հետ միմիայն Շմուելի ներկայությամբ է:
Շմուելը երիտասարդ ուսանող էր, ուսումնասիրում էր ավարտական աշխատանքին առնչվող նյութերը, ուներ ընկերուհի, ընտանիք: Բայց մի կարճ ընթացք հետո ամեն ինչ գլխիվայր է շրջվում. կիսատ է թողնում ուսումը, ընկերուհին «անհայտ պատճառով» վերադառնում է նախկին ընկերոջ մոտ, ծնողները դադարում են ֆինանսական աջակցություն ցուցաբերել (սա թերևս նրանց միակ օգնությունն էր տղային, քանի որ Շմուելի հիշողություններից մենք տեղեկանում ենք ծնողների անտարբերության մասին) և սա, ըստ էության, դառնում է անջատում հին ընտանիքից և միացում նոր ընտանիքին, որտեղ երեք միայնակներին միավորում է ընդհանուր տանիքը՝ ցավը:
Համեմատենք Շմուելի կենսաբանական ու հոգևոր ընտանիքները:
Կենսաբանական ընտանիքում հերոսի միակ երջանիկ հիշողությունը կարիճի կծելն էր իրեն՝ ծնողների ուշադրությունն իր վրա հրավիրելը: Հերոսն ընտանիքում իր գոյությունը փորձում է հաստատել բացակայությամբ (հիշենք իր մահը երևակայելու տեսարանը):
Մինչդեռ այստեղ Աթալիան ու Վալդը կարծես թե դառնում են Շմուելի ծնողները, Աթալիան, երբեմն նաև ընկերուհին. Նա մի տեսակ ընդհանրացումն է թե մոր և թե սիրած կնոջ, այսինքն՝ մի իդեալ, որի անհասանելիությանն էր հենց ձգտում Շմուելը:
Շմուելը դեռ փոքր տարիքից անտարբեր էր շրջապատող աշխարհի նկատմամբ, ընտրությունը միշտ թողնում էր քրոջը, շփվում էր դասարանի ամենաթույլ աշակերտների հետ, իսկ հոբբին՝ հին նամականիշների հավաքումն էր: Հիշենք նաև կենսուրախ, քաղաքային կյանքը սիրող Յարդենային և կյանքին անհաղորդ Շմուելին: Ահա այս իրողությունները գալիս են ապացուցելու նրա՝ ժամանակի հետ ոչ համընթաց քայլելը: Կյանքի ընթացքից դուրս մղված այս երիտասարդը

վերագտնում է իրեն իբրև Գերշոմ Վալդ: Այս անձերի նույնացումն այնքան է խտանում (մեկի ֆիզիկական ծերությունն ու մյուսի հոգեպես ծեր լինելու ձգտումը), որ վեպի վերջին հատվածներում, երբ Վալդը գալիս է հրաժեշտ տալու Շմուելին, վերջինիս թվում է՝ ինքն է գնացել Վալդի մոտ: Շմուելի հենակներով տեղաշարժը ևս հիշեցնում է Վալդին:
Շմուելը «որսորդ չէր», երազող էր, ինչպես Աբրավանելը և Միխան: Միխայի մահը յուրօրինակ նվեր է դառնում այդ տանը հայտնվելու համար, Շալթիել Աբրավանելի մահը՝ Իսրայել պետության ստեղծման ընթացքին ծանոթանալու, պատմության հետքերով գնալու համար:
Այս տունը կարծես կյանքի հանդերձը հանած, կես մեռած, կես ապրող մարդկանց հանդիպատեղն է:
Եթե Աբրավանելը մարդասիրության ջատագովն էր, ապա Վալդը սերը սահմանափակ էր համարում, որը որոշ քանակից հետո սպառվում է (ապացույցը՝ Աթալիայի քարակերպ գոյությունն է):
Վեպի ամենազեղեցիկ կողմերից է թզենու սիմվոլը: Վեպում այն հիշատակվում է երեք անգամ: Այն բացահայտում է Հիսուսի մարդկային կողմը՝ միս ու արյուն ունենալը, Հուդայի՝ իբրև առաջին և վերջին քրիստոնյայի հավատն առ Հիսուս և, իհարկե, այդ հակասական պատմությունը գրի առնող հերոսի նվիրվածությունն իր ուսումնասիրությանը: Թզենին կրոնի և հավատի հավերժական հարցերը քննողն է և միևնույն ժամանակ իրողությունների լուռ վկան, որի ստվերում են մնում պատասխանները:
Վեպի ընթերցումը ընդօրինակում է միջավայրի և հերոսների վարքագիծը՝ տևում է խաղաղ, Վալդի տան պես անաղմուկ ու Շմուելին հատուկ դանդաղությամբ, քեզ քո հետ կապելով, քեզ քեզնից պոկելով: Ընթերցողը վեպում նաև հնարավորություն է ունենում վերանայելու երազող մարդասերի՝ Աբրավանելի կարգավիճակը որպես հայր: Մարդ, որն իր գործի նվիրյալն էր, որը երազում էր փոխել աշխարհի մոդելը, հեռացնել բոլոր ճաղավանդակները (պետականության մասին է խոսքը), որոնցով պետությունները պաշտպանվում էին իրարից: Բայց այս նույն երազողը իր փոքրիկ աշխարհում ոչինչ չփոխեց, ու հայր չեղավ (հիշենք Աթալիայի հնգօրյա բացակայությունը չնկատելը):
Օգը նախամարդուց մինչև ժամանակակից մարդու մոդելը վարպետորեն պրոյեկտում է ընթերցողի վրա, ու դա լավագույն միջոցն է հասկանալու աշխարհի, պետության և մարդու խնդիրը: